

**Տ. ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆԻ ԶԱՐՈՉՐ՝ ԽՈՍՎԱԾ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ  
ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(19 հոկտեմբերի 2003 թ.)

Փառք և գոհություն մեր Երկնային Տիրոջը՝ այս գեղեցիկ օրը պարզևնյու համար: Նոկտեմբերի 19-ը Նայ Առաքելական Եկեղեցու և Նայոց Բանակի փարեզրության մեջ մտավ որպես Միաձնաէջ Մայր Տաճարի կառուցման 1700-ամյակին նվիրված ուխտագնացությունների շրջագծում Նայոց Բանակի ուխտագնացության օր:

Անցած փարեվերջին Վեհափառ Նայրապետի իմաստուն փնտրիներուամբ 2003 թ. հոգակվեց Մայր Տաճարի փարի՝ մարտոցվող Ուխտի Պատարագներով առիթ և հնարավորություն ընձեռելով հայաստանաբնակ և աշխարհասփյուռ հայությանը՝ իրենց գոհության և փառաբանության աղոթքը կատարելու ու ծնրադրելու Միաձնաէջ Սրբասեղանի առջև, հավասարելու իրենց նվիրումը, սերը, իրենց խոնարհումը, հավատարմությունն առ Լուսավորչահասարար Աթոռը Նայոց Նայրապետության, առ Լուսավորչաշավիղ Գահակալն Ամենայն Նայոց:

Եվ այսօր իրենց ուխտի ճանապարհն անցան հարյուրավոր զինվորականներ՝ Նայաստանի Նանրապետության պաշտպանության նախարարի գլխավորությամբ: Եկան Էջմիածին՝ ևս մեկ անգամ իրենց մեջ Էջմիածնի խորհուրդը ապրելու, Էջմիածնի սրբությամբ սրբվելու, Էջմիածինն իրենց կյանք փանելու: Եկան Էջմիածին՝ ևս մեկ անգամ ուխտելու՝ հավատարիմ մնալ մեր ազգային արժեքներին, մեր խնկարայր հավատքին, մեր դարավոր մշակույթին: Թող Բարձրյալն Աստված ընդունի Ձեր ուխտը:

Այս պահին իմ միտքն է գալիս հայոց պատմությունից մի դրվագ: 1918 թ. մայիսյան դժնդակ օրերն էին, թշնամին մեծաթիվ ուժերով շարժվում էր Երևանի վրա: Միլիկյանը զեկուցում է Արամին. «Ջորամասս քայքայվում է՝ թիկունքի ընդհանուր քայքայման պատճառով: Ջրի պակասության պատճառով զորամասը հոգնած է, իսկ գլխավորը փամփուշուն է, որ համարյա չկա: Մտածում եմ, որ սրիպված եմ նահանջել և Ջեյվայից»: Եվ խնդրում է Երևանի մոտ պաշտպանական դիրքեր պատրաստել:

Միլիկյանը գալիս է նաև Էջմիածին, Գևորգ 5-րդ Վեհափառ Նայրապետին առաջարկելու թողնել Սուրբ Էջմիածինը և պատասպարվել Սևանի վանքում: Գևորգ 5-րդ Վշտակիիր Կաթողիկոսը, շրջապատված հոգևորականներով, լսում է առաջարկությունը և պատասխանում. «Ես չեմ կարող թողնել Էջմիածինը: Եթե պետք է մեռնեմ՝ Էջմիածնում կմեռնեմ, իմ ձեռքերով կպաշտպանեմ, իմ հոգևորականներով կպաշտպանեմ»: Վեհափառի այս պատասխանը ոգևորություն է առաջացնում հոգևորականների ու զինվորականների շրջանում, պետական այրերի մոտ և ալիքվում ժողովրդի մեջ:

Շինգ օր շարունակ Նայաստանյայց բոլոր եկեղեցիների զանգերը հնչում էին՝ մարտի կոչելով բոլոր նրանց, ում համար թանկ էր Նայրենիքի պատիվը, ում համար թանկ էին հայոց սրբությունները: Շինգ հարյուր հոգևորականներ, Գարեգին արքեպիսկոպոս Նովսեփյանի,

Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի գլխավորությամբ անցնելով աշխարհագրի գլուխ, մեկնում են Սարդարապատ: Միլիկյանը հաղորդում է Արամին. «Ես ամեն ինչ ունիմ, այլևս մարդ մի ուղարկիր: Եղա Կաթողիկոսի մոտ, որն ինձ օրհնեց և հաստատեց ինձ որոշեց մնալ Էջմիածնում: Ընտրեիք իր ուղարկած ուժերի՝ փրամադրությունը հրաշալի է: Արևածագին անցնում եմ հակահարձակման: Աստված մեզ հեպ»: Եվ Աստված մեզ հեպ եղավ Սարդարապատում: Աստված մեզ հեպ եղավ նաև Արցախում:

Չիրավի. Էջմիածինը մեծ խորհուրդ ունի իր մեջ: Դարերի ընթացքում Էջմիածինը մեծ առաքելություն է կատարել Հայոց մեջ: Լինելով հայ ժողովրդի հոգևոր կենտրոնը՝ իր շուրջն է համախմբել ողջ հայությանը, եղել է հոգաբար մայր բոլոր կարոպյալների, միսիթարիչ բոլոր սգավորների համար, աղոթապալա բոլոր հավատացյալների ու ուխտավորների, ոգևորող սգավորների համար, աղոթապալա բոլոր հավատացյալների ու ուխտավորների, ոգևորող սգավորների համար, աղոթապալա բոլոր հավատացյալների ու ուխտավորների, ոգևորող սգավորների համար: Դարեր շարունակ Էջմիածինն է ձևավորել հայությանը և նշանակել հայությանը: Էջմիածինը եղել է գրեթե ամբողջ հայության, հայոց դպրության կենտրոնը. այսօր էլ կենտրոն է մեր սրբազան հայությանը հանդիսացող բազմաթիվ մաքրամտեր, հոգևոր, աստվածաբանական երկեր ու ուսումնասիրություններ, փառեր ու շարականներ:

Բայց և առավել չափով Էջմիածինը եղել է սիրո, եղբայրության, միասնականության, առ Աստված հավատի ու խաղաղության ֆորումը, եղել է Բարձրյալ Աստուծո ծրագրերի իրականացնող հայության մեջ: Դարեր շարունակ Էջմիածինը, համաձայն մեր Տիրոջ՝ Նիստա Քրիստոսի այն խոսքի, թե «Արքայությունը ձեր մեջ է», Երկինքն իջեցրել է Երկիր և այսօր էլ փարածել, սփռել Աստվածային Սերը, «ի մարդկան խաղաղությունը»:

Եվ իր այս առաքելության համար է, որ մեր ժողովուրդը սիրով, հավատքով և նվիրվածությամբ է պարտեր մեր հոգևոր այս վեհապանծ կոթողը: Տեղին է այսօր էլ հիշել 20-րդ դարի մեծագույն բանաստեղծ ու մրաժող Ավետիս Բասիկյանի կես դար առաջ ասած խոսքերը. «Հայ ժողովուրդը սիրում է Էջմիածինը: Նրա մաշկը քերտ է Էջմիածին դուրս կգա: Հայ ժողովուրդն իր պերականությունը կորցնելով՝ Էջմիածին մեջ գրավ իր ազգային զգացմունքների հանրագումարը: Էջմիածինը շանթարգել է եղած հայ ժողովրդի համար: Եթե հայ ժողովուրդը հասել է մեր օրերը, այդ շնորհիվ Էջմիածին է: Հայ ժողովուրդը երկու գործակից է ունեցել՝ մեկը Էջմիածինն է, մյուսը՝ ազգային-ազատագրական իղեալը»:

Մեծամուն բանաստեղծը հոգու ինչ հրճվանք պետք է ապրեր, եթե այս օրվան ներկան լիներ և սկանալիսը հայ ժողովրդի երկու գործակիցների սիրո համբույրին՝ Էջմիածինը ազգային-ազատագրական իղեալի մեջ, և այդ իղեալը կողոները, իրականացնողները՝ Էջմիածինի մեջ:

Այսօր էլ հայ ժողովրդի գործակիցները երկուսն են՝ 1700-ամյա Էջմիածինն ու 11-ամյա Հայոց Բանակը: 10-11 փարիներ առաջ հայ ժողովրդի ազգային-ազատագրական իղեալը մարմին առավ, նյութականացավ, իրականություն դարձավ Հայոց Բանակով և շնորհիվ հազարավոր նվիրյալների անձնավեր ծառայության, շնորհիվ բազում հայրերի թափած արյան, շնորհիվ մերձավորի, եղբոր, ընկերոջ նկատմամբ ունեցած մեծագույն սիրո:

Հայոց Բանակը հիմնվեց մեկ կարևոր առաքելությամբ՝ հայ ժողովրդի խաղաղությունը, բարօրությունն ապահովելու, երաշխավորելու, սպրեժարար կյանքը զարգացնելու առաքելությունն էր այն: Առաքելություն, որ առ այսօր հաջողությամբ են իրականացնում մեր զին-

ված ուժերը՝ իրենց հաղթանակներով ու հզորությամբ շարժելով ողջ հայության հպարտության զգացումը:

Խաղաղության մեծագույն ցանկությունն էր, որ ի մի բերեց մեր հազարավոր հայրերին ու եղբայրներին, մայրերին, քույրերին: Բազում նվիրյալներ իրենց հայրերի, պապերի դարավոր ընդվզումը հոգիներում՝ ելան նրանց նվիրական իղձը իրագործելու՝ ազատ ու անկախ Հայրենիք կերտելու վճռակամությամբ: Այսօր արդեն իրականություն է դարձել նրանց նվիրական ցանկության մեկ մասը՝ ունենք անկախ պետականություն, հզոր բանակ, բայց ոչ վերջնական խաղաղություն:

Եկեղեցին և Բանակը համազգային արժեք են և համազգային հոգածության կարիք ունեն: Բանակը միայն պաշտպանության նախարարինը չի, Էջմիածինը, Եկեղեցին միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսինը չի և վերջապես՝ Պետությունը միայն Նախագահինը չի: Մենք իրավունք չունենք այս արժեքները անձնավորելու:

Մրանք այն արժեքներն են, որոնց համար յուրաքանչյուր հայ մարդ պարտականություն ունի՝ անկախ սոցիալական, կուսակցական, դավանական պարկանելությունից: Իր ուժերի, հնարավորությունների սահմաններում նեցուկ լինելու, օգտակարություն ունենալու և ողջ ծանրությունն առաջնորդների ուսերին ջթողնելու պարտականություն ունի: Այսօր Աստուծո կամոք բարենպաստ իրավիճակ է ստեղծվել երկիրը զարգացնելու, կյանքը բարելավելու, այս արժեքների շուրջը համախմբվելու: Եվ մենք իրավունք չունենք այս պատենությունը կորցնելու:

Խոսքիս ավարտին ուզում եմ հիշեցնել մեր արդի պարմության երկու երջանկահիշատակ մեծությունների՝ Սպարապետ Վազգեն Սարգսյանի և Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Առաջինի վերջին պարգամները.

*«Մտածեք էս երկրի մասին, մտածեք էս բանակի մասին, սա է էս երկրի փրկությունը»:*

*«Փափագս է, որ դուք երկար ապրեք, քաջ ըլլաք և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը սիրեք և անոր սուրբ, կրոնական և ազգային ծառայությունը շեն պահեք»:*